

## 6. Ճանապարհային վճար

Ճանապարհային վճարը Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է: Մաքսային մարմինների կողմից ճանապարհային վճարը գանձվում է.

- այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար,
- այլ պետություններում գրանցված ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար

1) Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը յուրաքանչյուր մուտքի համար մաքսային մարմինների կողմից գանձվում է հետևյալ տասնհինգօրյա դրույքաչափերով.

1. Թեթև մարդատար (մինչև 7 նստատեղով) ավտոմեքենաների համար` 10000 դրամ
2. Ավտոբուսների համար`
  - ա) մինչև 13 նստատեղով 20000 դրամ
  - բ) 13-ից մինչև 30 նստատեղով 40000 դրամ
  - գ) 30 և ավելի նստատեղով 60000 դրամ
3. Բեռնատար ավտոմեքենաների և ավտոզնացքների համար`
  - ա) մինչև 1,5 տոննա բեռնատարողությամբ 15000 դրամ
  - բ) 1,5-ից մինչև 3 տոննա բեռնատարողությամբ 25000 դրամ
  - գ) 3-ից մինչև 5 տոննա բեռնատարողությամբ 40000 դրամ
  - դ) 5-ից մինչև 10 տոննա բեռնատարողությամբ 65000 դրամ
  - ե) 10-ից մինչև 20 տոննա բեռնատարողությամբ 80000 դրամ
  - զ) 20-ից մինչև 36 տոննա բեռնատարողությամբ 110000 դրամ
  - է) 36 և ավելի տոննա բեռնատարողությամբ 150000 դրամ

2) Այլ պետություններում գրանցված ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության վճարը գանձվում է տրանսպորտային միջոցի ընդհանուր զանգվածի և սոնիի (կամրջակի) վրա ընկնող բեռնվածքների համար սահմանված դրույքաչափերի գումարի և ավտոմոբիլային ճանապարհներով տեղափոխման հեռավորության արտադրյալի չափով: Ծանրաքաշ են համարվում այն տրանսպորտային միջոցները, որոնց հետևյալ ցուցանիշներից առնվազն մեկը գերազանցում է`

ընդհանուր զանգվածը` 36 տոննան.

մեկ սոնիով կամրջակի բեռնվածքը` 10 տոննան.

երկու սոնիով կամրջակի բեռնվածքը` 18 տոննան.

երեք սոնիով կամրջակի բեռնվածքը` 22 տոննան:

Երկու կամ երեք սոնիով կամրջակներ են համարվում այն կամրջակները, որոնց հարևան սոնիների հեռավորությունը միմյանցից չի գերազանցում 2,5 մետրը:

36 և ավելի տոննա ընդհանուր զանգվածով (կշռով) տրանսպորտային միջոցների երթևեկության վճարը տեղափոխման յուրաքանչյուր կիլոմետրի համար գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՋԱՆԳՎԱԾԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ  |
|---|--|
| 36-ից մինչև 40 տոննա                    | 110 դրամ   |
| 40-ից մինչև 45 տոննա                    | 130 դրամ   |
| 45-ից մինչև 50 տոննա                    | 155 դրամ   |
| 50-ից մինչև 55 տոննա                    | 175 դրամ   |
| 55-ից մինչև 60 տոննա                    | 220 դրամ   |
| 60-ից մինչև 65 տոննա                    | 265 դրամ   |
| 65-ից մինչև 70 տոննա                    | 310 դրամ   |
| 70-ից մինչև 75 տոննա                    | 375 դրամ   |
| 75-ից մինչև 80 տոննա                    | 440 դրամ   |
| 80-ից մինչև 85 տոննա                    | 550 դրամ   |
| 85-ից մինչև 90 տոննա                    | 770 դրամ   |
| 90-ից մինչև 95 տոննա                    | 1100 դրամ  |
| 95-ից մինչև 100 տոննա                   | 1540 դրամ  |
| 100 և ավելի տոննա                       | 1540 դրամին գումարած 100 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի համար՝ 88 դրամ: |

Մեկ սոնիով կամ քառակի վրա 10 տոննայից ավելի բեռնվածքով տրանսպորտային միջոցների երթևեկության վճարը տեղափոխման յուրաքանչյուր կիլոմետրի համար գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| ՄԵԿ ՍՈՆԻՈՎ ԿԱՄՔՉԱԿԻ ԲԵՌՆՎԱԾՔԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|-------------------------------|-------------|
| 10-ից մինչև 10,5 տոննա        | 45 դրամ     |
| 10,5-ից մինչև 11 տոննա        | 110 դրամ    |
| 11-ից մինչև 11,5 տոննա        | 175 դրամ    |

|                        |   |
|------------------------|---|
| 11,5-ից մինչև 12 տոննա | 265 դրամ  |
| 12-ից մինչև 12,5 տոննա | 375 դրամ  |
| 12,5-ից մինչև 13 տոննա | 530 դրամ  |
| 13-ից մինչև 13,5 տոննա | 770 դրամ  |
| 13,5-ից մինչև 14 տոննա | 1100 դրամ   |
| 14-ից մինչև 14,5 տոննա | 1430 դրամ   |
| 14,5-ից մինչև 15 տոննա | 1760 դրամ   |
| 15-ից մինչև 15,5 տոննա | 2100 դրամ   |
| 15,5-ից մինչև 16 տոննա | 2400 դրամ   |
| 16 և ավելի տոննա       | 2400 դրամին գումարած 16 տոննան գերազանցող յուրաքանչյուր կես տոննայի համար՝ 45 դրամ: |

Երկու առիթով կամրջակի վրա 18 տոննայից ավելի բեռնվածքով տրանսպորտային միջոցների երթուկության վճարը տեղափոխման յուրաքանչյուր կիլոմետրի համար գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| ԵՐԿՐՈՒ ՍՈՆԻՈՎ ՎԱՍՏՈՒՄԻ ԲԵՆՈՎԱԾՔԸ | ԴՐՈՒՅՔԱՅԱԾԸ   |
|----------------------------------|---|
| 18-ից մինչև 19 տոննա             | 265 դրամ  |
| 19-ից մինչև 20 տոննա             | 380 դրամ  |
| 20-ից մինչև 21 տոննա             | 430 դրամ  |
| 21-ից մինչև 22 տոննա             | 700 դրամ  |
| 22-ից մինչև 23 տոննա             | 925 դրամ  |
| 23-ից մինչև 24 տոննա             | 1190 դրամ   |
| 24-ից մինչև 25 տոննա             | 1540 դրամ   |
| 25-ից մինչև 26 տոննա             | 1950 դրամ   |
| 26 և ավելի տոննա                 | 1950 դրամին գումարած 26 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի համար՝ 55 դրամ: |

Երեք սոնիով կամրջակի վրա 22 տոննայից ավելի բեռնվածքով տրանսպորտային միջոցների երթևեկության վճարը տեղափոխման յուրաքանչյուր կիլոմետրի համար գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| ԵՐԵՔ ՍՈՆԻՈՎ ԿԱՄՐՋԱԿԻ ԲԵՌՆՎԱԾՔԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ   |
|--------------------------------|---|
| 22-ից մինչև 22,5 տոննա         | 90 դրամ   |
| 22,5-ից մինչև 23 տոննա         | 110 դրամ  |
| 23-ից մինչև 24 տոննա           | 175 դրամ  |
| 24-ից մինչև 25 տոննա           | 265 դրամ  |
| 25-ից մինչև 26 տոննա           | 395 դրամ  |
| 26-ից մինչև 27 տոննա           | 550 դրամ  |
| 27-ից մինչև 28 տոննա           | 705 դրամ  |
| 28-ից մինչև 29 տոննա           | 880 դրամ  |
| 29-ից մինչև 30 տոննա           | 1080 դրամ   |
| 30-ից մինչև 31 տոննա           | 1300 դրամ   |
| 31-ից մինչև 32 տոննա           | 1540 դրամ   |
| 32-ից մինչև 33 տոննա           | 1805 դրամ   |
| 33-ից մինչև 34 տոննա           | 2135 դրամ   |
| 34-ից մինչև 35 տոննա           | 2650 դրամ   |
| 35 և ավելի տոննա               | 2650 դրամին գումարած 35 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի համար՝ 55 դրամ: |